# Ջեյնի ճամփորդությունը

**Ջեսիկա Լարսեն**

*Հիմնված է իրական պատմության վրա*

*Նյու Յորք, ԱՄՆ, 1843 թվական*

Ջեյն Մաննինգը դիտում էր, թե ինչպես է նավը հեռանում նավահանգստից՝ ուղևորվելով դեպի Էրի լիճը: Նա այնպիսի զգացողություն ունեցավ, ասես իր երազանքները հեռանում էին դրա հետ:

Ընդամենը մեկ տարի առաջ նա միացել էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և որոշել էր տեղափոխվել Նավուի այլ Սրբերի հետ լինելու համար: Նրա մայրը և ընտանիքի յոթ անդամները ճամփորդել էին նրա հետ Էրի ջրանցքով ցած՝ դեպի Բուֆալո (Նյու Յորք): Սակայն Բուֆալոյում նրանց թույլ չտվեցին նավ բարձրանալ մաշկի գույնի պատճառով:

«Հիմա մենք ի՞նչ ենք անելու»,- ցածր ձայնով հարցրեց նրա եղբայրը՝ Իսաակը:

Հարցն արձագանքեց ցրտաշունչ օդում: Նավուն դեռևս 800 մղոն (1287 կմ) հեռու էր: Նրանք կարող էին հուսալքվել և բռնել տան ճամփան կամ փորձել ճամփորդել ավելի ուշ: . . .

Բայց Ջեյնը չէր կարող սպասել: Նա գիտեր, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Աստված կրկին խոսում էր մարգարեների միջոցով: Նա պետք է հասներ Նավու իր ընտանիքի հետ:

Ջեյնը թոթվեց ուսերը և նայեց դեպի արևմուտք: «Մենք կքայլենք»:

Եվ նրանք քայլեցին: Այնքան, որ նրանց կոշիկները մաշվեցին: Այնքան, մինչև նրանց կրունկները ճաքեցին և արյունոտվեցին, և նրանք աղոթեցին, որ վերքերը լավանան: Երբեմն նրանք դրսում էին քնում, իսկ սառնամանիքն այնքան ուժեղ էր, կարծես ձյան մեջ լինեին: Որոշ մարդիկ փորձեցին բանտարկել նրանց, մտածելով, թե նրանք փախուստի դիմած ստրուկներ են: Նրանք չգիտեին, որ Մաննինգներն ազատ սևամորթ ընտանիք էին: Իսկ նրանք շարունակում էին քայլել՝ երգելով օրհներգեր ժամանակն անցկացնելու համար:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋԻՄ ՄԱԴՍԵՆԻ

Նրանք մոտեցել էին Նավուին, երբ հասան մի գետի:

«Կամուրջ չկա»,- ասաց Իսահակը:

Ջեյնը գլխով արեց: «Մենք պետք է պարզապես քայլելով անցնենք այն»: Երբ նա մտավ գետը, ջուրը հասավ մինչև նրա կոճերը: Նա դանդաղ առաջ շարժվեց: Ջուրը բարձրացավ մինչև նրա ծնկները և ապա անցավ նրա գոտկատեղից: Երբ նա հասավ գետի մեջտեղը, ջուրը հասնում էր մինչև նրա պարանոցը: Բարեբախտաբար, այն ավելի չխորացավ, և բոլոր Մաննինգներն ապահով անցան գետը:

Ի վերջո նրանք եկան Նավու: Ջեյնը բլուրի վրայից կարող էր տեսնել հովտում գտնվող Նավուի Տաճարի կրաքարե գեղեցիկ պատերը: Չնայած այն դեռ ավարտված չէր, սակայն նա շունչը պահած նայում էր: Ինչ-որ մեկն առաջնորդեց նրանց դեպի այն տունը, որտեղ ապրում էր Մարգարե Ջոզեֆը:

Դռան շեմին կանգնած էր բարձրահասակ, սևահեր մի կին:

«Եկեք, եկեք»,- կանչեց նա: «Ես Էմմա Սմիթն եմ»:

Հաջորդ մի քանի րոպեներն անհավանական էին: Ջեյնը հանդիպեց Մարգարեին, և նա սենյակում աթոռներ շարեց բոլոր Մաննինգների համար: Ջեյնը երախտագիտությամբ խրվեց աթոռի մեջ և լսեց, թե ինչպես էր Ջոզեֆը ներկայացնում իրենց այնտեղ գտնվողներին՝ ներառյալ իր ընկեր բժիշկ Բերնհայզելին: Ապա Ջոզեֆը դարձավ դեպի Ջեյնը. «Դուք եղել եք այս փոքրիկ խմբի ղեկավարը, այնպես չէ՞»,- հարցրեց նա:

«Այո, պարոն»,- պատասխանեց Ջեյնը:

Ջոզեֆը ժպտաց: «Աստված օրհնի ձեզ: Այժմ ես ուզում եմ լսել ձեր ճամփորդությունների մասին»:

Ջեյնը պատմեց իրենց վնասված ոտքերի, ձյան վրա քնելու և գետն անցնելու մասին: Բոլորը լուռ լսում էին: «Սակայն ամեն բան այդքան էլ վատ չէր»,- ավելացրեց նա վերջում: «Մենք անցնում էինք մեր ճանապարհը ուրախանալով, օրհներգեր երգելով և Աստծուն գոհություն հայտնելով, մեր հանդեպ Նրա անսահման բարության ու ողորմության, մեզ պաշտպանելու և մեր ոտքերը բուժելու համար»:

Մի քանի րոպե լռություն տիրեց: «Ի՞նչ եք մտածում այդ մասին, բժիշկ»: Ի վերջո Ջոզեֆն ասաց, դիպչելով նրա ծնկին: «Արդյո՞ք դա հավատ չէ»:

«Եթե ես լինեի նրանց փոխարեն, վախենում եմ, որ հետ կկանգնեի այդ մտքից ու կվերադառնայի իմ տունը»,- խոստովանեց բժիշկ Բերնհիզելը:

Ջոզեֆը գլխով արեց և կրկին շրջվեց դեպի Ջեյնը և նրա ընտանիքը. «Աստված օրհնի ձեզ: Այժմ դուք շրջապատված եք ընկերներով»: ■

*Հեղինակն ապրում է Տեխասում (ԱՄՆ):*

Ջեյն Մաննինգը մի քանի ամիս ապրեց Էմմա և Ջոզեֆ Սմիթների հետ: Նա ամուսնացավ Իսահակ Ջեյմսի հետ, և նրանք Յուտա հովտի առաջին բնակիչներից էին: Նա Եկեղեցու հավատարիմ անդամ մնաց, չնայած շատ դժվարությունների միջով անցավ: Երբ 1908 թվականին նա մահացավ, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918) խոսեց նրա թաղման արարողության ժամանակ: